ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան, հեռ. 594015
Էլ. փոստ sirvard.gevorgyan@justice.am

№ 01/27.0.01/9618-2023
«24» փետրվար 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Բալասյան,

Ի պատասխան Ձեր՝ 2023 թվականի փետրվարի 7-ի թիվ Ե-130/23 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 13-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

2/27/2023

X

Sirvard Gevorgyan

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN SIRVARD 6804830105

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Հայկ Ափյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-119

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻԵ N 7-490/23
«28» 02 2023 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 13-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 13-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի 1-ին կետով հաստատվող հավելված N 1-ի (այսուհետ՝ Հավելված) գլխագրում «2023 թվականի» բառերից հետո անհրաժեշտ է հանել «12» թիվը, քանի որ տվյալ պարագայում խոսքն ընդունվող, այլ ոչ թե արդեն իսկ ընդունված իրավական ակտի ընդունման ամսաթվի մասին է:

2. Հավելվածի 25-րդ կետում «համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 13-Ն որոշման հավելված N 2-ով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «պետք է համապատասխանեն սույն որոշման հավելված N 02-ով» բառերով՝ ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտերով սահմանված նորմերի անհիմն կրկնություններից խուսափելու *նպատակով իրավական ակտում կիրառվում են հղումներ:*

3. Հավելվածի 28-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե որ կարգով են մասնագիտացված կազմակերպությունները իրականացնում աղբի փոխադրումը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտերում հղումները կատարվում են ***հստակ և ուղղակի:***

4. Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները՝ Հավելվածի 35-րդ կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«35. Աղբահանության և սանիտարական մաքրման կանոնները խախտելը, չսահմանված վայրերում սպառման թափոններ թափելը առաջացնում է պատասխանատվություն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված կարգով:»

ՀՀ ԱՆ իրավական ակտերի
փորձաքննության գործակալության պետ՝

2/24/2023

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ